ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Ուրբաթ, 25 հոկտեմբերի 2019 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի Շուշան Դոյդոյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

1. Վարչապետի աշխատակազմում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանն է, հեռ.՝ (+37410) 51-57-14, էլ. փոստ՝ vladimir.karapetyan@gov.am :
2. Կառավարության պաշտոնական կայքում «Տեղեկատվության ազատության պատասխանատու» հիպերհղման հետ կապված խնդիրը տեխնիկական է եղել, որն այժմ շտկված է: Այս հղումով՝ https://www.gov.am/am/staff-structure/other/943/, կարող եք տեսնել անհրաժեշտ տեղեկատվությունը:
3. Կից տրամադրվում է վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանին վարչապետի աշխատակազմում տեղեկատվության ազատության պատասխանատու անձի նշանակման իրավական ակտի պատճենը:

Վարչության պետի պաշտոնակատար՝
Արմեն Խաչատրյան

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am
Կայքէջ՝ www.gov.am

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 01» փետրվարի 2019 թ. N 58 - Ա

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 330-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 12-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-Լ որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 13-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. Վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանին նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ:

2. Ուժը կորցրած ճանաչել վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի հունիսի 13-ի «Սարգիս Խանդանյանին տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին» N 330-Ա հրամանը:

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ